ՎԻՇԱՊԱԳՈՐԳԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԷԱԼՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Աշխունջ Պողոսեան

Գորգագործական մշակոյթը ուսումնասիրողների համար վիշապագորգերը միշտ էլ եղել են յատուկ ուշադրութեան առարկայ: Մասնաւորապէս՝ կարեւորուել ու կարեւորւում են դրանց գեղազարդման համակարգում եղած յօրինուածքների իմաստաբանական մեկնաբանումները, վիշապի պատկերների ոճաւորումների ձեւերն ու մանաւանդ դրանց ծագման ժամանակաշրջանի ու տարածաշրջանների հետ կապուած հարցերը: Բոլոր դէպքերում այս տիպի գորգերը համարուել ու համարւում են գորգագործական մշակոյթի համակարգում արուած նկատելի ներդրում, իսկ դրանց ստեղծած հանրոյթին էլ՝ գորգագործական հնամենի աւանդոյթներ ստեղծող ու կրող:

Վիշապագորգերի բնորոշիչ ու գեղազարդման համակարգում առանցքային տեղ ու նշանակութիւն ունեցող տարրը վիշապի ոճաւորումն է, որը հանդէս է գալիս բազմաթիւ տարբերակների տեսքով (նկ. 1):

Հայոց գորգերի, այդ թւում՝ միջնադարին վերաբերող գորգերի ու գորգապատկերների գեղազարդման համակարգում լայնօրէն յայտնի է հայերէն մեծատառ «Տ»-ին նմանուող ու դրա բազմատեսակ տարբերակներով պատկերուող, այսպէս կոչուած, օձագալար զարդանախշը: Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում արուած հետազօտութիւններից պարզուել է, որ դա առնչւում է օձի, ձկան ու ջրի հետ: Այսպէս, Վասպուրականում այն յայտնի է ջրեր, Լոռիում՝ ձկան ողնաշար անուանումներով[1]: Գամիրքում այդ պատկերը կոչում են օձի ձագ[2]: Ուստի, քննարկուող հարցի ուսումնասիրման տեսակէտից, անշուշտ, կարեւոր է առասպելական վիշապի էութեան ու դրսեւորումների բացայայտումը:

Ի՞նչ էր ներկայացնում առասպելական վիշապը հայոց ծիսապաշտամունքային համակարգում: Այս կապակցութեամբ բաւականին որոշակի են գրաւոր սկզբնաղբիւրների տեղեկութիւնները: Օրինակ՝ Եզնիկ Կողբացին, «Եղծ աղանդոցում» ներկայացնելով հայոց հին հաւատալիքներում առասպելական վիշապի տարբեր դրսեւորումներ, այնուամենայնիւ գտնում է, որ վիշապն ունի օձի էութիւն եւ որ վիշապ են կոչել մեծամարմին օձերին ու ձկներին[3]:

Այդ նոյնը հաղորդում են նաեւ ուրիշ պատմիչներ: Յովհաննէս Մանդակունին իր ճառերում խօսելով դրանց նոյնութեան մասին, եզրակացնում է՝ «վիշապ՝ որ է օձ»[4]: Շապուհ Բագրատունին իր հերթին գրում է. «Զի օձին ձագին լաւ է սպանանել, որ ոչ վիշապանայ»[5]: Իսկ Մխիթար Այրիվանեցին էլ յիշատակում է վիշապաձկան մասին. «Լինի անձրեւ քառասուն օր, եւ վիշապաձուկն մի ելանէ ի Կասբիական ծովէն եւ ուտէ ձկունս Կուր գետոյ»[6]: Այդպիսով, առասպելական վիշապը հայոց ժողովրդական հաւատալիքներում ընկալւում էր իբրեւ հսկայ մի օձ կամ չափազանց խոշոր ձուկ: Ուստի օձագալար պատկերն էլ, իր բոլոր տարբերակներով, նաեւ առասպելական վիշապի ոճաւորում է: Այն

հիմնականում մատուցւում է եզրագծերում[7], սակայն կան գորգեր, որտեղ օձագալար պատկերը հիմնական յօրինուածք է եւ, գորգադաշտում գրաւելով կենտրոնական տեղ, գեղազարդման համակարգում ստանում է առանցքային նշանակութիւն:

Այդօրինակ գորգերն էլ, ինչպէս արդէն նշեցինք, ընդունուած է տարբերակել «վիշապագորգ» անուանումով:

Մենք պարզել ենք, որ միջնադարեան հայոց մանրանկարներից երկուսում կան գորգապատկերներ, որոնց դաշտը ամբողջութեամբ գեղազարդուած է այդ նախշերի կանոնաւոր շարքերով: Դրանցից մէկի հեղինակը ԺԳ. դ. նշանաւոր մանրանկարիչ Գրիգոր Մաղկողն է, որն այն պատկերել է Թարգմանչաց աւետարանի «Աստուածամօր ննջը» մանրանկարում[8]: Այդտեղ սեղանին դրուած մահճում պատկերուած է Աստուածամայրը, իսկ սեղանի տակ էլ գորգ է փռուած: Գորգի դաշտը օձագալար պատկերների միջոցով բաժանուած է հաւասարաչափ ուղղանկիւնաձեւ շրջանակների, եւ այդ նոյն պատկերներով էլ յարդարուած է գորգի եզրագծին:

Տուեալ դէպքում կարեւորելով մանրանկարի թեման՝ կարծում ենք, որ վիշապի ոճաւորումներով գորգի առկայութիւնն այդտեղ պատահական չէ: Ըստ երեւոյթին, դա հայոց բնորոշ հնամենի ծիսապաշտամունքային աւանդոյթների պատկերային դրսեւորումներից է: Աւելացնենք, որ այդ աւետարանը, ուսումնասիրողների կարծիքով, ստեղծուել է Կարինում[9]: Հետագայում դառնալով Արցախի Դոփեան իշխանական տան սեփականութիւնը՝ 1311 թ. պահուել է Խաղարավանքում[10]:

Օձագալար պատկերով գեղազարդուած միւս գորգապատկերն Արցախի Մեծշէն գիւղի նշանաւոր «Կարմիր» աւետարանի մանրանկարներից մէկում է: Այն ստեղծուել է աւելի վաղ՝ 1209 թ., Կոստանդնուպոլսում, իսկ 1236-1242 թթ., Գարեգին Յովսէփեանի ենթադրութեամբ, լրացուել է նշանաւոր մանրանկարիչ Իգնատիոսի մանրանկարներով[11]: Իգնատիոսի նկարած գորգապատկերի ամբողջ դաշտը ծածկուած է վիշապի ոճաւորումների շարքերով, որոնք, սակայն, պատկերուած են իրար ագուցուած տեսքով եւ թողնում են անկանոն աշխատանքի տպաւորութիւն[12]: Օձագալար պատկերներով է գեղազարդուած նաեւ 1280-ական թթ. ստեղծուած Սմբատ Գունդստաբլի աւետարանի խորանազարդերից մէկի գորգապատկերը: Ընդ որում, այստեղի վիշապի ոճաւորումները գծային ձեւերով առաւել մօտ են դասական վիշապագորգերի եզրագծերում եղած համանման պատկերներին[13]:

Այսպիսով, ներկայացուած օրինակները վկայում են, որ միջնադարում հայոց բնորոշ գորգերի թւում եղել են այնպիսիք, որոնց գեղազարդման համակարգն ամբողջութեամբ եւ կամ դրա կառուցուածքային առանձին տարրերը բաղկացած են եղել վիշապի ոճաւորումների պատկերներով:

Ինչո՞վ կարելի է բացատրել այդ երեւոյթը: Արդեո՞ք դա մի պատահական դրուագ չէ հայոց պատմա-մշակութային համակարգում:

Հայոց աւանդական հաւատալիքների ու բանահիւսութեան հետազօտութիւններից պարզուել է, որ առասպելական վիշապի պաշտամունքը հայոց մէջ ունեցել է հնամենի աւանդոյթներ ու բազմաբնոյթ դրսեւորումներ: Մասնաւորապէս՝ առասպելական վիշապի պատկերով քարակոթողները դրուել են ոռոգիչ համակարգե-

© National Library of Armenia

րի ափերին եւ ըստ այդմ էլ՝ ընդունուել են իբրեւ հովանաւոր ուժ, ջրի ու աղբիւրների պահապան, արգասաւորութեան ու պտղաբերութեան խորհրդանիշ[14]:

Ու թէեւ քրիստոնէութեան ընդունումից յետոյ հայոց աւանդական հաւատալիքների այլ կերպարների, տների ու ծէսերի համակարգում արուեցին նոր կրօնին համապատասխան իմաստային վերափոխումներ, իսկ մի մասի պաշտամունքն էլ առհասարակ արգելուեց, այդուհանդերձ, վիշապի առասպելական կերպարը այնքան էր կարեւորուած հայոց աշխարհընկալման համակարգում, որ այն շարունակւում էր լայնօրէն դրսեւորուել մշակոյթի տարբեր ոլորտներում, այդ թւում՝ պատկերագրման ու մոնումենտալ արուեստի գործերում:

Հայաստանում առասպելական վիշապի վաղ պատկերագրումներն ու մասնաւորապէս՝ վերը յիշատակուած կոթողները թուագրւում են դեռեւս մ.թ.ա. Դ.-Գ. հազ.: Վիշապապատկերների ոճաւորումներ կան այդ ժամանակաշրջաններին վերաբերող խեցեղէնի[15], Բ.-Ա. հազ. բրոնզէ զէնքերի[16] ու գործուածքի[17] վրայ: Այդ աւանդոյթը, բնականաբար, շարունակուել է նաեւ հետագայ դարաշրջանների հայոց կիրառական-գեղազարդման արուեստում, ըստ այդմ՝ նաեւ գորգարուեստում[18]:

Վիշապագորգերի դասական օրինակներ են համարւում ԺԵ.-ԺԸ. դդ. թուագրուող նմոյշները, որոնց գեղազարդման համակարգը բնորոշւում է առասպելական վիշապի ոճաւորուած պատկերներով, պսակաւոր, բացուած թերթերով խոշոր բուսանախշերով, ինչպէս նաեւ ճառագայթազարդ վարդակներով (նկ. 2): Դրանք միմեանցից բացազատուած են լինում բարդ զարդանախշերից կազմուած գունաժապաւէններով, որոնք, իրար հետ հատուելով, գորգադաշտում, յօրինուածքների շուրջը, առաջացնում են շեղանկիւնաձեւ ուրուագծով շրջանակներ[19]:

Դասական վիշապագորգերն իրենց հերթին բաժանւում են մի քանի տարբերակի: Դրանք առանձնանում են վիշապի ոճաւորման ձեւերով: Հիմնականը համարելով վերոյիշեալը՝ մենք այդ առնչութեամբ, որպէս ելակէտային նմոյշ, կարեւորում ենք նաեւ 1680 թ. գործուած, հայալեզու արձանագրութեամբ («Ես Գուհարս, մեղօք լի, հոգով տկար, էս նորահաս ձեռամբ գործեցի, ով տեսնի, մեկ բերան օղորմի ասի»), գործողի անունով «Գուհար» կոչուած գորգը[20]: Դրա գեղազարդման համակարգում վիշապի ոճաւորումները պատկերուած են զոյգերով, ստորին մասում միմեանց կցուած, իսկ վերին մասերն իրարից հեռացած: Ընդհանուր առմամբ, այդ ամբողջութիւնը ունենում է քնարաձեւ տեսք:

Դասական վիշապագորգերի մի քանի նմոյշ պահւում է Հայաստանի թանգարաններում, այդ թւում մէկը՝ Ազգագրութեան պետական թանգարանում[21]:

Ընդհանուր առմամբ, դասական վիշապագորգերը, որոնք աչքի էին ընկնում առաջին հերթին իրենց մոնումենտալութեամբ ու նաեւ խոշոր չափերով, հիմնականում վերաբերում են ԺԶ.-ԺԸ. դդ.:

Ինչո՞վ բացատրել այս պարագան:

Բանն այն է, որ գորգն ի սկզբանէ ծիսապաշտամունքային առարկայ էր, հետագայում՝ վերնախաւային ու հասու չէր հանրոյթի լայն շերտերին: Գորգեր գործում էին արքունիքին, իշխանական տներին ու վանական համալիրներին կից եղած յատուկ գործատներում, հիմնականում իրենց կարիքների համար[22]: Այս մասին են վկայում մի շարք կողմնակի սկզբնաղբիւրներ:

Օրինակ՝ յայտնի է, որ Աշոտ Բագրատունու կինը՝ Կատրամիդէ թագուհին, 980-ական թթ. Անիի Ս. Կաթողիկէ եկեղեցին զարդարել է «ի ծիրանածաղկի ոսկեթել նկարագործ անկուածոց եւ ոսկեղէն անօթոց եւ բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ»[23]: Իսկ Հաթերքի Վախթանգ իշխանի կին Արզուխանումը Գետիկի եւ Հաղպատի վանքերին, Մակարավանքին եւ Դադիվանքին է նուիրում իր եւ իր դուստրերի գործած վարագոյրները[24]: Հաւանաբար այդ ու համանման այլ տեղեկութիւնների հիման վրայ էլ ակադեմիկոս Յակոբ Մանանդեանը կարծիք է յայտնել, որ այդօրինակ գործատներում ի շարս արհեստաւորների աշխատել են նաեւ ազնուականական ընտանիքների անդամներ[25]: Նկատենք, որ այդ երեւոյթը առհասարակ բնորոշ էր բնափակ տնտեսութիւն վարող աւատատիրական տներին, այդ թւում նաեւ՝ Հայաստանի հարեւան երկրներում: Մասնաւորապէս՝ Բիւզանդիայում եւ Արաբական խալիֆաթում գոյութիւն ունէին գործուածքի, ոսկերչութեան եւ այլ արքունական արհեստանոցներ, որոնք վերահսկւում էին յատուկ վերակացուների կողմից եւ իրենց արտադրանքով սպասարկում էին արքունիքի պահանջները[26]: Այս առումով էլ միանգամայն տրամաբանական է, որ այդ աւանդոյթը հետագայում շարունակւում էր Արցախի մելիքների կանանց կենցաղում, որոնք «թեշիկով թել էին մանում, ասեղնագործում, քսակ եւ գործուածքներ շինում»[27]: Յատուկ գործատների գոյութիւնը պայմանաւորուած է եղել նաեւ գորգերի անհրաժեշտ հումքի՝ թելերի ու ներկանիւթերի ձեռքբերման, գործելու տեխնոլոգիայի եւ տեխնիկայի հետ կապուած խնդիրներով: Բանն այն է, որ գորգերի արտադրանքը նախ եւ առաջ պահանջում էր բրդի, բամբակի, ներկանիւթերի զգալի պաշարներ՝ մի բան, որն ի վիճակի էին ապահովելու խոշոր սեփականատէրերը՝ արքունիքը, մեծատուններն ու խոշոր վանքային համալիրները: Բարձրորակ, շուկայում գնողունակութիւն վայելող գորգերի արտադրման ասպարէզում, անտարակոյս, անհրաժեշտ էին նկարիչներ, հմուտ գործող վարպետներ, իսկ խոշոր գորգեր գործելու համար՝ ընդարձակ, լուսաւոր շինութիւններ, մեծ տորքեր: Այս բոլորի համար պահանջւում էին որակեալ աշխատուժ ու նիւթական զգալի միջոցներ[28]: ԺԹ.-Ի. դդ. վերաբերող դաշտային ազգագրական նիւթերը նոյնպէս մատնանշում են գորգ գործելու ասպարէզում նիւթական հնարաւորութիւնների առաջնահերթ նշանակութիւնը:

Մենք ենթադրում ենք, որ դասական վիշապագորգերը գործել են այդօրինակ արհեստանոց-գործատներում: Դրանց գեղազարդման ու գունային կատարեալ ու կանոնակարգուած համակարգը, մեծ չափերն ու մի քանի դար շարունակ համեմատաբար կայուն չափանիշերի պահպանուելը՝ դրա վկայութիւնն են հանդիսանում: Հիմք ընդունելով վերը շարադրուածները՝ կարող ենք եզրակացնել, որ, ԺԹ. դ. սկսած, դասական վիշապագորգերի բացակայութիւնը պէտք է բացատրել գորգերի արհեստանոցային կամ մանուֆակտուրային արտադրութեան անկման հետ այնքանով, որքանով որ նշուած դարասկզբից Արցախում դադարում են գոյութիւն ունենալ մելիքական տները:

Մենք մի առիթով նշել ենք, որ արհեստանոցային գորգագործութեան հետ միասին Հայաստանում գոյութիւն է ունեցել նաեւ տնայնագործական գորգագործութիւն[29]: Տնայնագործական եւ արհեստանոցային գորգագործութեան հիմնական տարբերութիւններից մէկն էլ

© National Library of Armenia

դրանց տեխնիկա-տեխնոլոգիական յաջեցուածութեան մակարդակն էր, որը պայմանաւորուած էր վերջիններիս տնտեսական անհամեմատ բարձր ապահովուածութեամբ:

Այսքանով հանդերձ, գորգագործութեան տնայնագործական եւ արհեստանոցային ձեւերը գտնւում էին սերտ փոխազդեցութեան մէջ: Գործատների նկարիչների էսքիզներով գործուած գորգերի գեղազարդման մանրամասներն ու համակարգերը տարածում էին գտնում տնայնագործների մէջ, որոնք էլ դրանք վերարտադրում էին իրենց պատկերացումներին բնորոշ գունային ու գեղազարդման մանրամասների յաւելումներով: Ընդսմին, սրանով ենք պայմանաւորում գորգի, այդ թւում՝ վիշապագորգի միեւնոյն տիպի բազմաթիւ տարբերակների առաջացումը: Այս վերջիններս, բնականաբար, բնորոշւում են չափերի փոքրութեամբ, յօրինուածքների ազատ մատուցմամբ ու կանոնակարգուած չափանիշերի բացակայութեամբ: Միաժամանակ, գորգաշտի գեղազարդման համակարգը լրացւում էր հայոց աւանդական պատկերացումներին առնչւող նախշերով, զարդերով, պատկերների ոճաւորումներով ու գունային ինքնատիպ լուծումներով: Յամենայնդէպս, այդպիսիք են մեզ հասած ուշ վիշապագորգերը:

Բայց խնդրոյ առարկայի առումով մասնաւորապէս կարեւոր է այն, որ տնայնագործութիւնը պայմանաւորուած չէր արքունիքի ու իշխանական տների գոյութեամբ, եւ, բացի այդ էլ, մի գորգագործական կենտրոնում ձեւաւորուած աւանդոյթներն էլ բնակչութեան տեղաշարժերի, բռնագաղթերի ու այլ ճանապարհներով հեշտութեամբ տարածւում էին հայոց մշակութային տարածքում:

Ընդհանուր առմամբ, ուշ միջնադարին, նաեւ ԺԹ.-Ի. դդ. վերաբերող հայկական գորգերի հետազօտումից մեզ յաջողուել է բացայայտել ոճաւորուած վիշապապատկերի տարբերակներով բնորոշուող գորգերի շուրջ տասը տիպ:

Նկատի ունենալով գորգերի այս խմբի նկատմամբ եղած բուռն հետաքրքրութիւնն ու տեսակէտերի իրարամերժ լինելը՝ մենք կը փորձենք հնարաւորինս մանրամասն քննարկել բոլոր այդ տիպերին առնչւող յօրինուածքային ու մանաւանդ՝ ծագումնաբանական հիմնահարցերը:

Այս ոլորտում առաւել վիճայարոյց են ծագման տարածաշրջանների հետ կապուած հարցերը: Ուսումնասիրողների մի մասը (Ֆ. Մարտին, Ֆ. Գանցհոռն, Մ. Էյլանդ եւ այլք) այն վերագրում է պատմական Հայաստանին, թէեւ տարակարծութիւններ կան որոշակի շրջանների վերաբերեալ[30]: Մի խումբ ուսումնասիրողներ էլ (Ա. Ուֆամ-Պոոպ, Յ. Օրենդի, Կ. Էրդման, Շ. Ետկին եւ այլք) գտնում են, որ վիշապագորգերի աւանդոյթը Կովկաս եւ Հայաստան է ներթափանցել սելջուկ-մոնղոլական արշաւանքների շնորհիւ, եւ որ դրանք ունեն չին-մոնղոլական ծագում[31]:

Ադրբեջանցի գորգագէտ Լեաթիֆ Քերիմովն այս կապակցութեամբ ունի իւրայատուկ տեսակէտ: Նա այդ տիպի գորգերի հիմնական յօրինուածք է տեսնում վարդակներն ու բուսանախշ՝ արաբեսկները: Այնուհետեւ, նկատի ունենալով այդ զարդանախշերի պարսկա-արաբական «խաթայի» անուանումը, վիշապագորգերն էլ անուանում է «խաթայի» ու տեղայնացնում Ատրպատականում, աւելի կոնկրետ՝ Թաւրիզի շրջակայքում[32]:

Կան այս տեսակէտին յարող ուրիշ

ուսումնասիրողներ եւս, որոնք, համեմատութեան եզրեր որոնելով բուսանախշ խոշոր յօրինուածքներով բնորոշուող պարսկական «Հերիզ» տիպի գորգերի եւ դասական վիշապագորգերի միջեւ ու այդ առումով նկատի ունենալով այդ երկու խմբերին պատկանող գորգերի գեղազարդումը բնորոշ խոշոր վարդակները, վերջիններիս ծագման վայր են ընդունում Իրանի հիւսիսարեւմտեան գորգագործական կենտրոնները, մասնաւորապէս՝ Թաւրիզ-Արդեբիլ տարածաշրջանը[33]:

Աւարտելով հարցի շուրջ եղած իրավիճակի հակիրճ բնութագրումը՝ հարկ է միայն ընդգծել, որ այս վերջին դէպքում, փաստօրէն, հիմնական ելակէտ են ընդունւում խնդրոյ առարկայ գորգերի գեղազարդման համակարգում եղած վարդակները: Մինչդեռ վիշապագորգերի գեղազարդման համակարգում դրանք երկրորդական տարրեր են ու, որպէս այդպիսիք, չեն կարող այդ գորգերի ծագումնաբանութեան բացայայտման հարցում կարեւոր դեր ունենալ:

Հայաստանի թանգարաններում, մասնաւորապէս՝ Ազգագրութեան պետական թանգարանում պահւող դասական վիշապագորգերի ու դրանց տարբերակների եւ գորգագործական մի շարք տարածաշրջաններում մեր ուսումնասիրութիւնները հնարաւորութիւն են ընձեռում մեզ նոյնպէս անդրադառնալ գորգերի այդ խմբի ծագմանն ու տարածաշրջաններին առնչւող խնդիրներին:

Նկատի ունենալով, որ վերը նշուած բոլոր տեսակէտերի վերաբերեալ կան բազմաթիւ ուսումնասիրութիւններ ու մեկնաբանութիւններ՝ հարկ չենք համարում անդրադառնալ դրանց մանրամասն քննութեանը, բայց եւ աւելորդ չենք համարում նշել, որ ըստ այդ կարծիքների՝ վիշապագորգերի ծագման ու դրանց գործելու տարածաշրջանների թւում յաճախակի յիշատակւում են պատմական Հայաստանի հիւսիսարեւմտեան, արեւելեան եւ հիւսիսարեւելեան շրջանները, ինչպէս նաեւ պատմական Փոքր Հայքը (Սեբաստիան եւ շրջակայ գաւառները)[34]: Առհասարակ, բոլոր ուսումնասիրողներն էլ վիշապագորգերի առնչութեամբ, անկախ դրանց ծագման վերաբերեալ ունեցած կարծիքներից, այս կամ այն չափով կարեւորել են Արցախը եւ Սիւնիքը: Դասական վիշապագորգերը, որոշ տարակարծութիւններով հանդերձ, ընդհանուր առմամբ, թուագրւում են ԺԳ.-ԺԸ. դդ.[35]:

Ուսումնասիրողներից շատերը անտեսելով գորգագործական մշակոյթի վաղ աւանդոյթների գոյութիւնը մատնանշող սկզբնաղբիւրների վկայութիւնները՝ Հայաստանում գորգագործական մշակոյթի ծագումը կապում են սելջուկների ներթափանցումների հետ ու թուագրում ԺԲ.-ԺԳ. դդ[36]: Ուստի հայոց գորգագործական մշակոյթի ուսումնասիրման, դրա ամբողջական պատմութեան վերհանման տեսակէտից առաւել եւս կարեւորում ենք վիշապագորգերի ծագումնաբանութեան հարցը:

Այս առումով մենք կարեւորում ենք յատկապէս պատկերային սկզբնաղբիւրները, որոնք, կոնկրետ թուագրում ունենալուց զատ, պատկերացում են տալիս նաեւ գորգի գեղազարդման ընդհանուր համակարգի, իսկ յաճախ նաեւ՝ առանձին մանրամասների ու գունային երանգների մասին:

Ըստ այդմ՝ առանձնայատուկ է հայոց մանրանկարչութիւնը, որին մենք արդէն մասնակի անդրադարձել ենք՝ ԺԳ.-ԺԴ. դդ. վերաբերող վերը բերուած վիշապի ոճաւորումներով գեղազարդուած երկու գորգապատկերով:

© National Library of Armenia

Շատ աւելի ուշագրաւ համեմատական տուեալներ ենք յայտնաբերել ԺԱ. դ. կէսերին վերաբերող մանրանկարներում[37]:

Հետազօտելով դասական՝ ԺԶ.-ԺԸ. դդ. թուագրուող վիշապագորգերի եզրագօտիներին բնորոշ զարդանախշերը՝ պարզել ենք, որ դրանք բնորոշ են նաեւ ԺԱ.-ԺԳ. դդ. ստեղծուած մանրանկարներին: Մասնաւորապէս՝ կեռխաչ, զիգզագ զարդերով ու ոճաւորուած վիշապապատկերներով են գեղազարդուած Անիի մերձակայ վանական համալիրներից մէկում 1053 թ. ստեղծուած Աւետարանի մանրանկարների եզրագօտիները: Դրանց թւում յատկապէս կարեւորում ենք Մարկոս եւ Ղուկաս աւետարանիչներին պատկերող մանրանկարների եզրագօտիները, որոնք գեղազարդուած են իրար կցուած ոճաւորուած վիշապապատկերներով, որոնք էլ հետագայում, ԺԶ.-ԺԷ. դդ. ու դրանից յետոյ էլ, չափազանց բնորոշ էին դասական վիշապագորգերին[38]: Վիշապի ոճաւորումներով է գեղազարդուած նաեւ վերը ներկայացուած Թարգմանչաց աւետարանի «Աստուածամօր նինջը» մանրանկարում պատկերուած գորգը[39]:

Նկատի ունենալով վիշապի ծիսապաշտամունքային կերպարի առանձնայատուկ տեղը հայոց նախաքրիստոնէական հաւատալիքներում եւ առհասարակ պատկերագրական արուեստում[40] պատահական չպէտք է համարել վիշապի ոճաւորումների առկայութիւնը հայոց մանրանկարչութեան մէջ, մանաւանդ որ սա այն բնագաւառն է, որն առաւել պահպանողական է օտարամուտ ազդեցութիւնների նկատմամբ:

Վերը յիշատակուած Հայաստանի հնագիտական բնակատեղիներից յայտնաբերուած նիւթերի ընձեռած վկայութիւններն ու գրաւոր աղբիւրներում տեղ գտած խնդրոյ առարկային վերաբերող տուեալները ակնյայտօրէն վերաբերում են ԺԱ.-ԺԲ. դդ. նախորդած հարիւրամեակներին: Այդ ամէնն ու մանրանկարներում ներկայացուած վիշապագորգերի գեղազարդման համակարգի կատարելութիւնը հնարաւորութիւն են տալիս վստահօրէն ենթադրել, որ այս ասպարէզում կային հաստատուած աւանդոյթներ, որոնք կը ձեւաւորուէին միայն պատմական տեւական ժամանակահատուածում, ազգային մշակոյթին քաջածանօթ գորգագործ-նկարիչների սերունդների ստեղծագործ աշխատանքով:

Ուստի, ամփոփելով ասուածը եւ հիմնուելով վերոյիշեալ փաստարկների վրայ, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանում վիշապագորգերի աւանդոյթը գոյութիւն ունէր մինչ ԺԱ. դ., այսինքն՝ նախքան սելջուկների ու թուրքմենական այլ ցեղերի մուտքը Հայկական լեռնաշխարհ:

Վիշապագորգերի ծագումնաբանութեան վերաբերեալ մեր այս տեսակէտը հիմնաւորելու համար նշանակալից դերակատարում ունեն նաեւ վերը յիշատակուած դրանց ուշ տարբերակները:

Այս առումով հարկ է կրկին շեշտել, որ, վիշապագորգեր ասելով, ընդունւում են այն գորգերը, որոնց գեղազարդման համակարգում առանցքային են դասական վիշապագորգերին բնորոշ վիշապապատկերների տարբերակներն ու դրանց ոճաւորումները, մանաւանդ որ այդ պատկերներով է պայմանաւորուած գորգերի այդ խմբին տրուած անուանումը:

Մեզ յայտնի ուշ վիշապագորգերը բաժանել ենք երեք խմբի եւ դրանցով տարանջատել համապատասխան տիպեր ու տարբերակներ: Այդ առումով էլ ելակէտ ենք ընդունել վիշապի ոճաւորումների պատկերագրման ու դրա ներկայացման ձեւը: Ըստ այդմ՝ իբրեւ այդ խմբերի հիմնական բնորոշիչներ մենք համարում ենք՝

ա. դասական վիշապագորգերին բնորոշ վերը բերուած վիշապապատկերը (նկ. 2).

բ. Գուհար գորգի գեղազարդման մէջ եղած վիշապի զոյգ ոճաւորումներից կազմուած քնարաձեւ յօրինուածքը.

գ. դասական վիշապագորգերին բնորոշ ճառագայթազարդ վարդակի[41] ու Գուհար գորգին բնորոշ քնարաձեւ յօրինուածքի համադրումը:

Ստորեւ փորձել ենք դրանք ներկայացնել համապատասխան խմբերով՝ ներառելով նաեւ դրանցում ընդգրկուած տարբերակներն ու նաեւ դրանց տարածման արէալները:

1. «Զրաբերդ» գորգերի խումբ.

Մեզ յայտնի է այս խմբին բնորոշող ճառագայթազարդ յօրինուածքով ու դրա տարբերակներով գեղազարդուած գորգի չորս տիպ: Սակայն դրանցից միայն մէկում է, որ կան նաեւ վիշապապատկերների ոճաւորումներ: Ուստի այստեղ կը խօսենք միայն խնդրոյ առարկային վերաբերող տիպի մասին: Այն բնորոշւում է ճառագայթազարդ մէկ կամ մի քանի յօրինուածքով եւ այն երկու կողմից երիզող վիշապի երկուական, իրար կցուած ոճաւորումներից կազմուած քնարաձեւ պատկերով: Վերջինիս համար տիպական ենք համարում Գուհար գորգի գեղազարդման համակարգում պատկերուածը[42]: Ճառագայթազարդ յօրինուածքով ու վիշապի այդօրինակ ոճաւորումներով գեղազարդուած դասական վիշապագորգի վաղ նմոյշները, ինչպէս վերն ասուեց, թուագրւում են ԺԵ.-ԺԶ. դդ.[43]:

Մենք գտնում ենք, որ այս տիպի վիշապագորգերին է առնչւում նաեւ 1202 թ. գործուած յայտնի Եռախորան գորգը: Դա դիտարկւում է գորգագաշտի վերին հատուածի գեղազարդման համակարգում, ուր պատկերուած է վիշապագորգերին բնորոշ մի ճառագայթազարդ յօրինուածք, իսկ դրա երկու կողմում էլ կայ վիշապի մէկական ոճաւորում[44]: Ըստ որում, կարծում ենք, որ այս վերջինները վիշապի ոճաւորման առաւել հնամենի տարբերակի արտայայտութիւնն են: Զրաբերդ տիպին պատկանող գորգերի գործման հիմնական տարածաշրջանները, ինչպէս յայտնի է, համարւում են Արցախը եւ Սիւնիքը[45]: Հարկ է նշել, որ այդ տիպի գորգերը Հայաստանի վերոյիշեալ պատմաազգագրական մարզերի գորգագործական կենտրոններում յայտնի են Զալաբերդ, Զելաբերդ, Զարաբերդ եւ նմանատիպ այլ անուանումներով, որոնք բոլորն էլ Արցախի Զրաբերդ գաւառի անուանման ձեւերն են: Ընդ որում, այդ գորգագործական կենտրոնին է վերաբերում նաեւ Եռախորան գորգը:

«Եռախորան» գորգը, որն ունի ընդարձակ հայատառ, թուակիր արձանագրութիւն, ուր յիշատակուած է նաեւ դրա ստեղծման վայրը՝ Հիւսիսային Արցախի Բանանց գիւղը: Այդ ամէնը հաշուի առնելով է, որ այդ տիպի գորգերի անուանման համար նպատակայարմար ենք գտել հէնց Զրաբերդ տերմինը: Ընդ որում, այդ տիպին բնորոշող ճառագայթազարդ յօրինուածքն էլ յարմար ենք գտնում կոչել Զրաբերդ յօրինուածք:

Զրաբերդ տիպի վիշապագորգեր աւանդաբար գործել են նաեւ Գեղարքունիքում, Լոռիում, մասամբ նաեւ Այսրկովկասի հիւսիսարեւելեան գորգագործական կենտրոններում եւ Ղարադաղում:

2. «Գուհար» գորգերի խումբ

Այս խմբին պատկանում են մի քա-

© National Library of Armenia

նի տիպեր, որոնց գեղազարդման համակարգում առանցքային են Գուհար գորգին բնորոշ զոյգ վիշապապատկերների ոճաւորումներից կազմուած քնարաձեւ ուրուագծով յօրինուածքը: Ի դէպ, հէնց դրանով էլ պայմանաւորուած է այս խմբին Գուհար կոչելը: Այս թուակիր, հայատառ արձանագրութեամբ գորգի նշանակութիւնը հայոց գորգագործական մշակոյթի ուսումնասիրման գործում մենք յատկապէս կարեւորում ենք, քանի որ այն, փաստօրէն, դասական եւ ուշ վիշապագորգերին կապող հանգոյց է, որին այս կամ այն չափով աղերսւում է դրանց մեծ մասը: Բնականաբար, խնդրոյ առարկայի համար նշանակալից է դրա ծագման տարածաշրջանի հարցը: Ուսումնասիրողներից ոմանք ենթադրում են, որ 1680 թ. գործուած այդ գորգը գործել են պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի գորգագործական կենտրոններից մէկում, ոմանք էլ՝ Արցախում[46]: Մեր հետազօտութիւնները թոյլ են տալիս նշել, որ այս գորգը գործուել է Արցախ-Սիւնիք տարածքի գորգագործական կենտրոններում, աւելի կոնկրետ՝ Վարանդա-Սիսական գաւառներում: Մեր այս տեսակէտի համար հիմք են ծառայում մի քանի փաստարկներ: Դրանց շարքում մենք առաջնային ենք համարում արձանագրութեան ոճը, մասնաւորապէս՝ «ով կարդա, մեկ բերան օղորմի ասի» բանաձեւը, որը մեր պրպտումների համաձայն՝ առաւելապէս բնորոշ էր նշուած տարածաշրջաններին: Ընդ որում, այն յատկապէս ընդունուած էր իբրեւ տապանաքարերի մակագրութիւն եւ բազմիցս հանդիպում է Արցախի եւ Սիւնիքի բոլոր գաւառներում, մասնաւորապէս՝ Վարանդայի, Դիզակի, Սիսականի ուշ միջնադարեան գերեզմանոցներում[47]: Տարածաշրջանում ընդունուած է նաեւ Գոհար անձնանուան՝ Գուհար տարբերակը:

Վիշապագորգերի այս խմբին ենք դասում ներքոյիշեալ տիպերին պատկանող գորգերը.

ա. Գուհար: Այս տիպի գորգերի գեղազարդման համակարգում առանցքային տարրը «Գուհար» գորգի քնարաձեւ յօրինուածքն է: Նկատի ունենալով, որ առհասարակ այդ տիպի գորգերին՝ են առաւելապէս բնորոշ Գուհար գորգի գեղազարդման համակարգի հիմնական տարրերը՝ նպատակայարմար ենք գտնում դրանք տարբերակել հէնց Գուհար անուանումով:

Ուսումնասիրողներին յայտնի է, որ այս տիպի գորգերը առաւելապէս բնորոշ են Արցախ-Սիւնիք գորգագործական տարածաշրջանին[48]: Բայց դրա տարբերակները գործել են նաեւ Տաւուշում, Ուտիքում, Շաքի-Շամախի տարածաշրջանի, ինչպէս նաեւ Իրանի հիւսիսարեւմտեան գորգագործական կենտրոններում: Այս վերջիններս յայտնի են «Կարաջա» անունով եւ վերաբերում են Ղարադաղում բնակուող համանուն, նախկինում քոչուորական կենսաձեւ վարող ցեղին:

բ. Սիսական: Այս տիպին պատկանող գորգերի գեղազարդման հիմնական տարրը Գուհար գորգին բնորոշ վիշապի ոճաւորումն է, որը ներկայացւում է մէկ կամ մի քանի շարքով: Այս դէպքում վիշապի ոճաւորումները ունենում են աղեղնաձեւ տեսք, պատկերւում են դէմ-դիմաց, ասիմետրիկ դիրքով, ծայրերը միմեանց հակոտնեայ, բայց սովորաբար իրարից անջատ (նկ. 4): Դրանց արանքում լինում է բազմանիստ կեռիկազարդ շրջանակ՝ լրացուած բազմաթերթ վարդակով կամ նմանատիպ այլ յօրինուածքով: Այդ ամբողջութիւնը յայտնի է մի քանի տարբերակների տեսքով: Յօրինուածքները կարող են լինել երկրաչափականացուած,

պատկերուել մի քանի շարքով, լրացուել տարաբնոյթ մանրամասներով: Հայաստանի Ազգագրութեան թանգարանի գիտաշխատողների դաշտային հետազօտութիւնները բացայայտել են դրանց տարածման հիմնական արէալները, որոնց թւում են Արցախը, Սիւնիքը եւ Ուտիքը, այլ խօսքով՝ Արցախին յարակից գորգագործական կենտրոնները: Ընդ որում, մեզ յայտնի դրա բոլոր տարբերակներն էլ բնորոշ են Սիւնեաց նահանգի Սիսական պատմական գաւառի գորգագործական կենտրոններին: Այս գորգերը յայտնի են նաեւ Ղուբա-Շաքի-Շիրուան գորգագործական տարածաշրջանում եւ բնորոշւում են միայն գունային ու տեխնիկական առանձնայատկութիւններով:[49] Մասնագիտական շրջաններին լայնօրէն յայտնի է նաեւ Լենքորան-Աստարա թալիշաբնակ (իրանալեզու) տարածքը[50]: Ընդ որում, այս տիպի գորգերը ուսումնասիրողներն ու վաճառականները տարբերակում են հէնց Լենքորան անունով[51]: Բայց նկատի ունենալով վերոյիշեալն ու մանաւանդ՝ այս խմբին պատկանող բոլոր տիպերի ու տարբերակների բնորոշ լինելը Սիսականի գորգագործական կենտրոնին՝ այս տիպի համար առաջարկում ենք Սիսական անուանումը:

գ. Մասեացոտն: Այս գորգերի գեղազարդման համակարգում առանցքային է «Գուհարին» բնորոշ կենտրոնական վարդակը եւ վիշապի զոյգ ոճաւորումներն այդ վարդակի գագաթներին[52]: Տարածման հիմնական արէալները Ուտիքը, Արցախը եւ Սիւնիքն են, ինչպէս նաեւ Սեւանի աւազանը: Մեր դաշտային հետազօտութիւնները վկայում են, որ այդպիսի գորգեր գործել են նաեւ Մասիսի շրջակայ գորգագործական կենտրոններում, յատկապէս՝ Մասեացոտնում ու Բագրեւանդում, ինչպէս նաեւ Վասպուրականի հիւսիսարեւելեան գաւառներում: Ընդ որում, գորգագործական այդ կենտրոններին վերաբերող նմոյշների գեղազարդման համակարգին բնորոշ են աւելի աւանդական յատկանիշեր, մասնաւորապէս՝ վարդակի ու վիշապի պատկերագրման համեմատաբար պարզունակ ձեւեր, որոնք, վկայում են դրանց հնամենի լինելն ու ձեւաւորման տեղական ակունքների առկայութիւնը: Այլ խօսքով՝ մենք հակուած ենք ենթադրելու, որ վիշապագորգերի այս տիպի ակունքները հաւանաբար հէնց այս գորգագործական կենտրոններում է: Նկատի ունենալով այդ ամէնը՝ այս տիպի գորգերը նպատակայարմար ենք գտնում այդ տարածաշրջանի՝ պատմական Մասեացոտն գաւառի անունով կոչել Մասեացոտն:

դ. Գարդման: Գուհարեան խմբին ենք դասում նաեւ գորգերի մի տիպ, որում վիշապի ոճաւորումները կորաւուն են՝ ծայրերն իրար ուղղուած, իսկ վարդակները՝ երկայնաձիգ շրջանակներում: Դրանք սովորաբար լրացւում են կենդանակերպ այլ ոճաւորումներով եւ բուսանախշերով[53]: Այս տիպի գորգերի վաղ նմոյշները յայտնի են ԺԷ. դ.[54]: Սոյն տիպը համեմատաբար քիչ է տարածուած, եւ եղած նմոյշներն էլ վերաբերում են Արցախին եւ Ուտիքին, մասնաւորապէս՝ Գարդմանին: Գունային լուծումներով, գեղազարդման համակարգի մանրամասների հարստութեամբ ու ինքնատիպութեամբ այս տիպը առանձնայատուկ տեղ ունի հայոց գորգագործական մշակոյթում: Նկատի ունենալով տարածման հիմնական շրջանը՝ նպատակայարմար ենք գտնում այս գորգերի տարբերակման համար շրջանառութեան մէջ ներդնել Գարդման անուանումը: Այս տիպի գորգերն առաջարկում ենք տարբերակել Գարդման անուանմամբ:

© National Library of Armenia

3. «Խնձորեսկ» գորգերի խումբ

Վիշապագորգերի ուշ տիպերին պատկանող երրորդ խմբին բնորոշ վիշապի ոճաւորումները համեմատաբար պարզ են: Ընդ որում, մասնագիտական գրականութեան մէջ այն յայտնի է նաեւ ամպածապաւէն անունով[55]: Վերջիններս թէեւ խիստ գծայնացուած են, այնուամենայնիւ ձեւով ու ընդհանուր ուրուագծով աղերսւում են վիշապի դասական ոճաւորումներին: Ուսումնասիրողներն ու առեւտրականները մեծ մասամբ այս յօրինուածքով գեղազարդուած գորգերը տարբերակում են Խնձորեսկ անուանումով: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ մենք էլ յարմար ենք գտնում խմբին նոյնպէս տալ այդ անուանումը:

ա. Խնձորեսկ: Սրանց գեղազարդման համակարգի հիմնական յօրինուածքը կազմուած է արեւի կամ յաւերժութեան խորհրդանիշ զարդից (կեռխաչ, աստղազարդ եւ այլն) եւ այն պարփակող վիշապի ութ ոճաւորուած պատկերից (նկ. 6): Պատկերագրման այս համակարգում արտացոլուած է բարու եւ չարի հակամարտութեան թեման, ուր բարու յաղթանակը խորհրդանշում է կեռխաչերից սկիզբ առնող կենաց ծառի նախշը[56]: Այս տիպը առաւելապէս բնորոշ է Արցախի եւ Սիւնիքի գորգագործական կենտրոններին ու յայտնի է մի շարք տարբերակներով: Դրանք հիմնականում տարբերակւում են հիմնական յօրինուածքի քանակով ու մատուցման ձեւով, ինչպէս նաեւ գորգի գեղազարդման համակարգը լրացնող մանրամասներով: Մասնագիտական շրջանակներում յայտնի է Խնձորեսկ անունով եւ ունի վիշապի ոճաւորման ու պատկերագրման առանձնայատկութիւններով բնորոշուող մի քանի տարբերակ[57]: Ի դէպ, տիպի Խնձորեսկ անուանումը կապուած է Գորիսին մերձակայ, գորգագործութեամբ դեռեւս միջնադարից յայտնի համանուն գիւղի հետ[58]:

բ. Գետաշէն: Բնորոշւում է երկայնաձիգ, զիգզագ երկու գունաժապաւէնով կազմուած շեղանկիւնաձեւ կամ բազմանիստ շրջանակներում պատկերուած գծայնացուած ու ոճաւորուած ութ վիշապապատկերով ու դրանց հետ մի ամբողջութիւն կազմող բուսածաղկային նախշերով (նկ. 7): Կենտրոնում լինում է զարդ, որի շուրջ բոլորն էլ զոյգ առ զոյգ՝ մէկմէկու դիմահայեաց պատկերւում են վիշապի ոճաւորումները[59]: Որոշ գորգագործական կենտրոններում, մասնաւորապէս՝ Գետաշէնում ու մերձակայ գորգագործական կենտրոններում գորգադաշտի անկիւններում պատկերւում է մէկական թամբած ձի:

Գորգերի այս տիպը յատուկ է Արցախի, Սիւնիքի, Գուգարքի, Վասպուրականի հիւսիսարեւելեան գաւառների գորգագործական կենտրոններին: Յատկապէս հանրայայտ են գորգագործութեան ճանաչուած կենտրոն Արցախի Ջրաբերդ գաւառի Գետաշէն գիւղում գործուած նմոյշները, որն էլ թոյլ է տալիս մեզ տիպը անուանակոչել գորգագործութեան դարաւոր աւանդոյթներով յայտնի հայկական այդ գիւղի անունով:

գ. Վայք: Գեղազարդման հիմնական տարրը բազմանիստ շրջանակի շուրջ ամփոփուած վիշապի պարզունակ՝ «Տ»-աձեւ ութ ոճաւորումներն են (նկ. 8): Դրանք իրարից տարանջատուած են շրջանակից սկզբնաւորուող հաւասարաչափ, զարդանախշուած գունաժապաւէններով: Շրջանակի կենտրոնում սովորաբար լինում է խաչազարդ: Վիշապի ոճաւորումները այս տիպի գորգերի գեղազարդման համակարգում հնամենի են ու յարում են պատկերագրման ժայռապատկերային ոճին, յիշեցնում են դասական վիշապագորգերին բնորոշ վիշապապատկերներ եւ սերտօրէն աղերսւում են «Խնձորեսկ» տիպի գորգերին ու, ըստ երեւոյթին, ունեն աւելի վաղ ծագում: Այս տիպը բնորոշ է Սիւնիքի, Արցախի, ինչպէս նաեւ Վասպուրականի հիւսիսային գորգագործական կենտրոններին: Մեր հետազօտութիւնների արդիւնքում պարզել ենք, որ այս տիպի գորգերի հնամենի նմոյշները, որոնք առանձնանում են Գուգարեան գորգերին բնորոշ, այսպէս կոչուած, ձկան ողնաշար յիշեցնող պատկերով ծածկուած գունաժապաւէնով, յայտնի են Վայքի գորգագործական կենտրոններից[60]: Նշենք, որ հէնց այդ հանգամանքով էլ պայմանաւորուած է «Վայք» տերմինի կիրարկման առաջարկը:

Վիշապակարպետներ: Վիշապագորգերի առնչութեամբ հարկ ենք համարում անդրադառնալ նաեւ հայոց բնորոշ կարպետների մի տիպի, որոնց գեղազարդման համակարգում հիմնականը վիշապի ոճաւորումներն են: Վիշապապատկերներն այս դէպքում աւելի շատ են նմանւում դասական վիշապագորգերում եղածներին: Այս առումով ուշագրաւ նմոյշ է Նիւ-Եորքի «Մետրոպոլ» թանգարանում պահուող ԺԷ. դ. վերաբերող վիշապակարպետը[61]: Դրանք երկայնաձիգ են, նմանւում են 5 թուանշանի գծային ձեւերին, ունենում են պոչ ու եղջիւրներ (նկ. 9): Այդպիսով, դրանք առասպելական վիշապի ոճաւորումներ են: Այս տիպի կարպետները մասնագիտական գրականութեան ու առեւտրական շրջանակներում յայտնի են զիլէ, վերնի, օձակարպետ եւ այլ անուանումներով, բայց, նկատի ունենալով հիմնական յօրինուածքի բնոյթը, գիտական շրջանառութեան ենք ներդնում վիշապակարպետ անուանումը: Սրանց գեղազարդման համակարգում վիշապապատկերները մատուցւում են երկայնակի շարքերով: Յայտնի են երեքից-չորս շարքով գեղազարդուած այս տիպի կարպետներ: Սրանք բնորոշւում են նաեւ կատարման բարդութեամբ ու աշխատատարութեամբ: Ըստ որում, զիլէ ու վերնի անուանումներն առնչւում են գործելու տեխնիկայի հետ: Այս տիպի կարպետների տարածման արէալների թւում յիշատակւում են Արցախը, Վասպուրականը, Ղուբա-Դերբենտը[62]: Արշակ Ալպոյաճեանն իր ուսումնասիրութիւններում նշում է ԺԷ.-ԺԸ. դդ. Փոքր Ասիայի Զիլէ քաղաքում ու դրա շրջակայքում այդպիսի կարպետներ գործելը[63]: Այդ քաղաքը գտնւում է պատմական Փոքր Հայքում: Ըստ Ա. Ալպոյաճեանի՝ սոյն կարպետների զիլէ անուանումն առնչւում է հէնց Զիլէ քաղաքի անուանը: Ուսումնասիրողը միաժամանակ նշում է, որ տարածաշրջանում ԺԶ.-ԺԸ. դդ. ընթացքում բնակութիւն էին հաստատել Արցախից եւ Սիւնիքից գաղթած հազարաւոր հայ ընտանիքներ, որոնց նախկին ծննդավայրերի անուանումները յստակօրէն արձանագրուած են տեղի եւ շրջակայ բնակավայրերի գերեզմանոցների տապանաքարերին: Յաւելենք, որ Արցախում, Ուտիքում եւ Սիւնիքում գործել են նաեւ նշուած կարպետների գեղազարդման համակարգը կրկնող գորգեր[64]:

Վերը շարադրուածներից ակնյայտ է դառնում, որ վիշապագորգերի հետագայ տարբերակների տարածման արէալների թւում հիմնականները Արցախն ու Սիւնիքն են ու դրանց յարակից տարածքները՝ Գարդմանը, Տաւուշը, Լոռին: Առկայ ուսումնասիրութիւններում յիշատակւում ու մեր հետազօտութիւններով հաստատւում է, որ վիշապագորգերի բոլոր ուշ տիպերն ու դրանց տարբերակները յայտնի են միայն Արցախի ու Սիւնիքի գորգագործական կենտրոններում: Ընդ ո-

© National Library of Armenia

րում, հարկ է յիշեցնել, որ դրանք յիշատակւում են նաեւ որպէս դասական վիշապագորգերի ստեղծման կենտրոններ:

Ինչո՞վ է պայմանաւորուած աւանդոյթների պահպանման այս բացառիկ երեւոյթը: Չէ՞ որ խօսքն այստեղ վերաբերում է մի քանի հազարամեակներ տեւած պատմա-մշակութային գործընթացներին:

Ըստ էութեան այս հարցին պատասխանում է ակադեմիկոս Նիկողայոս Մառը՝ իր երկարամեայ ուսումնասիրութիւնների արդիւնքում արձանագրելով, որ Արցախը պատմական Հայաստանի այն սակաւաթիւ տարածքներից է, որտեղ այս կամ այն չափով պահպանուեց կիսանկախ ու դրանով պայմանաւորուած նաեւ տնտեսա-մշակութային աւանդոյթների պահպանման ու զարգացման համար անհրաժեշտ համեմատաբար կայուն իրավիճակ[65]: Ըստ այդմ էլ՝ ԺԷ.-ԺԹ. դդ. սկզբներում մելիքական տներին կից դեռեւս կային գորգագործական արհեստանոցներ ու հնարաւորութիւն կար շարունակելու եղած աւանդոյթներն ու այն հարստացնել հետագայ պահանջմունքներին բաւարարող նոր մօտեցումներով: Կարծում ենք, որ, արդէն ԺԹ. դ. սկզբներից էլ սկսած, երբ թուլացան ու աստիճանաբար վերացան մելիքական երբեմնի հարուստ ու ազդեցիկ տները, հիմնականում դադարեց նաեւ խոշոր չափերի գորգերի, այդ թւում նաեւ՝ վիշապագորգերի արտադրութիւնը: Ասպարէզում մնաց տնայնագործական արտադրութիւնը՝ իր սահմանափակ հնարաւորութիւններով ու արդէն նշուած բոլոր առանձնայատկութիւններով հանդերձ:

Այսպիսով, վերը բերուած աղբիւրների ու տեսակէտերի քննութիւնից հետեւում է, որ վիշապագորգերի աւանդոյթը Արցախի ու Սիւնիքի գորգագործական կենտրոններում ունի վաղ ակունքներ: Ու թէեւ մեզ չեն հասել վաղ միջնադարին ու դրան նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող նմոյշներ, բայց Ժ.-ԺԱ. դդ. պատկանող գորգապատկերները վկայում են, որ այդ ասպարէզում կային արդէն հարիւրամեակների ընթացքում ձեւաւորուած որոշակի յօրինուածքներ եւ դրանց մատուցման սկզբունքներ: Մենք այն համոզմունքին ենք, որ այդ տարածաշրջաններում դասական վիշապագորգերի բոլոր ուշ տիպերի առկայութիւնը հէնց այդ աւանդոյթների շարունակութեան տրամաբանական արդիւնքն է հանդիսանում:

Այժմ անդրադառնանք վիշապագորգերի տարածման արէալների խնդրին: Այս առումով կարեւոր են յատկապէս Իրանի հիւսիսարեւմտեան եւ Այսրկովկասի հիւսիսարեւելեան գորգագործական կենտրոնները, որոնք բնորոշւում են գորգերի գեղազարդման ոլորտի տեխնիկա-տեխնոլոգիական որոշակի իւրայատկութիւններով: Դրա հետ միասին ուսումնասիրողները նկատել են նաեւ գորգագործական այդ կենտրոններում տեղ գտած արցախ–սիւնիքեան գորգարուեստին բնորոշ մի շարք աւանդոյթներ, որոնք արտայայտւում են ինչպէս առանձին տիպերի, այնպէս էլ գունային ու յօրինուածքային առանձնայատկութիւնների տեսքով: Ըստ իս՝ այստեղ ի շարս այլ գործօնների էական դեր են ժողովրդագրական տեղաշարժերը:

Ընդհանրապէս վաղ միջնադարից սկսած՝ Արցախն ու Սիւնիքը կարեւոր դեր են խաղացել Այսրկովկասի ռազմաքաղաքական կեանքում: Սասանեան Իրանի եւ Հայաստանի փոխադարձ համաձայնութեամբ կովկասեան լեռնականներից տարածաշրջանը պաշտպանելու պարտականութիւնը դրուել էր Սիւնիքի եւ Արցախի զինական ուժի վրայ: Այդ նպատակով Դերբենտի շրջակայքում ստեղծուել էին ամրացուած շրջաններ, որտեղ ընտանեօք բնակութիւն էին հաստատել հայ զօրականները[66]: Ղուբա-Դերբենտ տարածաշրջանում Թ.-ԺԴ. դդ. վերաբերող մշակութային, պաշտամունքային կառոյցները, գիւղատեղիներն ու գերեզմանոցները վկայում են հայոց ստուարաթիւ լինելու եւ մշակութային բուռն գործունէութեամբ զբաղուելու հանգամանքը[67]: Հարիւրամեակների ընթացքում սերտ կապ պահպանելով Արցախ-Սիւնիքի հետ՝ վերաբնակիչները տեղում շարունակել են զարգացնել ազգային մշակոյթը եւ, այն տեղայնացնելով, զգալիօրէն ներազդել նաեւ տեղական էթնիկական միաւորների մշակութային համակարգին: Մեծաթիւ հայերի ակտիւ գործունէութեամբ է պայմանաւորուել Ժ.-ԺԱ. դդ. այդ տարածաշրջանում Դերբենտի Հայոց թագաւորութեան առկայութիւնը՝ Դերբենտ մայրաքաղաքով, որի մասին յիշատակել են այդ դարաշրջանի մատենագիրները, իսկ Մատթէոս Ուռհայեցին, իբրեւ ականատես, նշել է նաեւ այդ քաղաքում հայոց հոգեւոր առաջնորդարան լինելու փաստը[68]:

Այնուհանդերձ, արաբական նուաճումների ընթացքում Հայաստանի եւ արեւելեան Կովկասի քաղաքական ու էթնիկական վիճակը նկատելիօրէն փոխուել էր: Այն առաւել կտրուկ փոփոխութիւնների էր ենթարկուել ԺԱ.-ԺԲ. դդ. յետոյ, երբ սելջուկների եւ ապա մոնղոլ-թաթարական ու թուրքմենական ցեղերի արշաւանքներից յետոյ Հայաստանում, ըստ այդմ՝ նաեւ Սիւնիք-Արցախում, հիմնաւորուել են բազմաթիւ քոչուոր ցեղեր, որոնց համար այն վերածուել է արօտատեղիների, մշտական թալանի, աւարառութիւնների յարմար տարածաշրջանի: Այդ ամէնը դարձաւ հիւսիսարեւելեան Այսրկովկասում ապրող հայերի զանգուածային արտագաղթերի եւ կրօնափոխութեան պատճառ, որոնց մի զգալի մասը ԺԸ. դ. վերջին եւ ԺԹ. դ. սկզբին տեղափոխուել է հիւսիսային Կովկաս, մասամբ էլ՝ մահմեդականացել[69]: Ընդ որում, այդ տարածաշրջանի գորգագործական կենտրոններում արմատացած գորգերի ու կարպետների տիպերի ու դրանց գեղազարդման համակարգում, կատարման տեխնիկա-տեխնոլոգիական չափանիշերում արցախեան աւանդոյթների առկայութեան առումով, ի շարս վերն արդէն նշուած պատճառների, մեծ դեր են ունեցել մահմեդականութիւն ընդունած եւ ազգային լեզուն կորցրած հայերը: Նրանք, ինչպէս ամէնուր, այնպէս էլ այդ տարածաշրջանում եւս շարունակում էին պահպանել ու զարգացնել իրենց նախնիներին բնորոշ զբաղմունքներն ու սովորոյթները[70]:

Սակայն այդքանից յետոյ էլ տարածաշրջանում շարունակուել է Կուտկաշէնի հայկական մելիքութեան գոյութիւնը (Շաքիի մերձակայքում)[71], եւ տեղի հայերն էլ պահպանել են սիւնիք-արցախեան աւանդոյթները՝ խօսել են նոյն բարբառով, կրել նոյն տարազատեսակները, ունեցել նոյն մշակութային յատկանիշերն առհասարակ[72]:

Արցախից ու Սիւնիքից տարբեր դարաշրջաններում զանգուածային տեղաշարժերի արդիւնքում այդ երկու նահանգներից տեղափոխուած հայերից կազմուած գաղթօջախներ են ձեւաւորուել նաեւ Ատրպատականում ու յարակից գաւառներում եւ Փոքր Ասիայի արեւմտեան մասերում: Այս մասին վկայում են լեզուա-բարբառային, տարազի ու սովորոյթների ուսումնասիրման արդիւնքները[73]: Անտարակոյս, դրա վկայութիւնն է նաեւ արցախ-սիւնիքեան գորգագործա-

© National Library of Armenia

կան աւանդոյթների, այդ թւում՝ գորգերի բազմաթիւ տիպերի, գեղազարդման մանրամասների տարածման փաստը վերը նշուած տարածաշրջանների գորգագործական կենտրոններում: Մինչդեռ յայտնի է, որ այդ տարածաշրջաններից Արցախ եւ Սիւնիք երբեւէ չի եղել որեւէ նկատելի տեղաշարժ, իսկ 1828-30 թթ. Ատրպատականից ու շրջակայ գաւառներից կատարուած յայտնի ներգաղթը խնդրոյ առարկային, փաստօրէն, չի վերաբերում:

Այդպիսով, հետեւելով վերը ներկայացուածների տրամաբանութեանը՝ կարող ենք նշել, որ Արցախն ու Սիւնիքը հանդիսանում են վիշապագորգերի ծագման առաւել հաւանական տարածաշրջանները:

Այսքանով արդէն կարելի էր աւարտել սոյն ուսումնասիրութիւնը, բայց յայտնի է, որ որոշ հետազօտողների համար այնքան էլ յստակ չէ այդ տարածաշրջանի էթնիկական կազմը: Որոշ ուսումնասիրողներ, կարծելով, թէ դա մահմեդականներով բնակեցուած տարածք է, ակամայ խեղաթիւրում են վիշապագորգերի էթնիկական պատկանելիութեան հարցը[74]:

Այդ նկատառումով հարկ ենք համարում ստորեւ համառօտակի անդրադառնալ նաեւ այդ հարցերին:

Արցախը Մեծ Հայքի նահանգներից էր եւ Ուտիքի ու Սիւնիքի հետ կազմում էր դրա հիւսիսարեւելեան մասը: Պատմաաշխարհագրական ու էթնիկական նոյնութիւնը հիմք է նաեւ մշակութային համակարգի ընդհանրութեան համար, որ արտայայտուած է լեզուա-բարբառային, տնտեսաձեւերի վարման, բնակավայրաբնակարանային, զգեստ-զարդարանքի եւ այլ համալիրներում:

Տարածաշրջանը պատմական Հայաստանի մշակութային կենտրոններից էր: Դ. դ. սկզբներից Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունելուց անմիջապէս յետոյ Արցախում, որպէս հոգեւոր ու մշակութային կենտրոն, գործում էր Ամարասի նշանաւոր վանքը, հետագայում՝ Գանձասարի վանքը:

Ե. դ. սկզբներից տարածաշրջանում իրենց գործունէութիւնն էին ծաւալել հայերէն գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները: Այդ ամէնի շնորհիւ այստեղ ձեւաւորուում են գրչութեան ու մշակոյթի այլ բնագաւառների կենտրոններ, որոնց թւում, Գանձասարից բացի, նշանաւոր էին Թարգմանչաց վանքը, Դադիվանքը, Սիւնիքում շուրջ երկու դար գործած Գլաձորի եւ Տաթեւի համալսարանները, իշխանական խոշոր տներին եւ վանական համալիրներին կից արհեստանոց-գործատները, որտեղ ի թիւս այլ արհեստների զբաղւում էին նաեւ գորգագործութեամբ: Պատմիչների վկայութեամբ՝ արդէն Զ.-Է. դդ. կարեւորուում էին տեղի գունագեղ գորգերն ու կարպետները[75]: Իշխանական տներին կից արհեստանոցներից մասնաւորապէս յիշատակուած է Հաթերքի (Արցախ) Վախթանգի իշխանական տան մասին: Նշւում է, որ իշխանի կին Արզուխթունը Գանձասարի, Դադիվանքի, Գոշավանքի եւ Թարգմանչաց վանքի համար ԺԳ. դ. գործել է գորգ-վարագոյրներ[76]:

Հետագայում էլ իրավիճակը համեմատաբար կայուն է եղել ամբողջովին հայաբնակ Արցախում եւ Սիւնիքում: Չնայած ռազմա-քաղաքական ծանր պայմաններին, մինչեւ ԺԸ. դ. վերջը եւ ԺԹ. դ. սկզբները իրենց գոյութիւնն են շարունակել Արցախի կիսանկախ հինգ մելիքութիւններն ու զսպել տարածաշրջանում հաստատուելու քոչուորների բոլոր փորձերը[77]:

Այս ամէնը, կարծում ենք, որոշակի

պատկերացում են տալիս Արցախի էթնիկական նկարագրի մասին: Ուստի անհասկանալի է, թէ ի՞նչ հիմնաւորումներով են որոշ ուսումնասիրողներ, մասնաւորապէս՝ «Թաւրիզեան հիպոթեզի» հեղինակները գրում, որ՝ «Ղարաբաղի տարածքը հիմնականում բնակեցուած էր քոչուորներով»[78]:

Ռուսաստանին միանալուց յետոյ թէեւ Արցախը վերաբաժանւում է չորս գաւառի՝ կազմելով Ելիզաւետպոլի նահանգի մի մասը, այնուամենայնիւ, հայերի տեսակարար կշիռը տարածաշրջանում յայտնուած միւս էթնիկական միաւորների նկատմամբ մնում է գերակշիռ: Նահանգի ամենախոշոր Ելիզաւետպոլ գաւառում 1885 թ., մարդահամարի համաձայն, հայերը կազմում էին բնակչութեան 35 տոկոսը, մահմեդականները՝ 54 տոկոս: Մահմեդականների 69 գիւղից 42-ը պատկանում էր քոչուոր ցեղերին, 5-ը՝ կիսաքոչուորներին[79]:

1895 թ. վիճակագրութեան տուեալներով՝ Շուշիի գաւառի բնակչութեան 58 տոկոսը կազմել են հայերը[80]: Նոյն ժամանակ Շուշի քաղաքի բնակչութեան կէսից աւելին նոյնպէս հայեր են եղել[81]: Ինչ վերաբերում է մահմեդական ցեղերին, ապա յայտնի է, որ նրանք էթնիկ առումով միատարր չեն եղել: Տարածաշրջան մուտք գործած թափառական կենսաձեւ վարող աւշարների, կարափափախների, թարաքեամաների, ջեւանշիրների եւ այդօրինակ այլ ցեղերի հետ մահմեդական բնակչութեան վերը նշուած տոկոսը լրացնում էին պարսիկները, քրդական, ինչպէս նաեւ կովկասեան ծագում ունեցող մի շարք այլ ցեղեր: Ընդհանուր առմամբ, այս էր տարածաշրջանի ժողովրդագրութեան պատկերը եւ չենք կարծում, որ այն մատնանշում է Արցախը հիմնականում քոչուորներով բնակեցուած լինելը: Փաստօրէն, Արցախում եւ շրջակայ գորգագործական կենտրոններում պատմա-մշակութային աւանդոյթներ ունեցող ժողովուրդների թւում բնիկ ու դրա հետ միասին էլ տոկոսային յարաբերութեան առումով գերակշիռ էին հայերը, որոնք, ինչպէս վերը տեսանք, դարեր շարունակ ներգործել են նաեւ հիւսիսարեւմտեան Այսրկովկասի մշակութային աւանդոյթների ձեւաւորմանը եւ հետագայ զարգացմանը: Այսպիսով, ոչ միայն որեւէ հիմք չկայ Արցախի գորգագործական մշակոյթի ձեւաւորման ու հետագայ զարգացման գործում վաչկատուն ցեղերին նախապատուութիւն տալու համար, այլեւ ակնյայտ է, որ Արցախից ու Սիւնիքից հայոց գորգագործական մշակոյթի աւանդոյթները տարածուել են էթնիկական այլ հանրոյթների շրջանում:

Արցախի էթնիկական նկարագրին անդրադառնալուց մենք մանրամասն փորձել ենք ներկայացնել յատկապէս բնակչութեան կենսաձեւին վերաբերող տուեալները: Մենք այս պարագայում կարեւորում ենք այդ հանգամանքը, քանի որ ակնյայտ է գորգագործութեամբ զբաղուելու եւ այդպիսի տնտեսաձեւ վարելու անյարիրութիւնը: Տարուայ մեծագոյն մասը լինելով ճանապարհներին կամ սարերում՝ նրանք ժամանակ, հնարաւորութիւն եւ անգամ կարիք չունէին զբաղուելու այլ, օգտակար զբաղմունքներով, քանի որ իրենց հիմնական զբաղմունքը աւարառութիւնն էր: Ադրբեջանցի գիտնական Վ. Ն. Լեւիաթովն, օրինակ, համարում է, որ «նրանք քոչի ճանապարհին զբաղւում էին թալանով եւ իսկական աղէտ էին նստակեաց բնակչութեան համար»[82]: Այդպիսին էին նաեւ թարաքեամաները, որոնք ձմեռում էին «Կուր գետի մերձակայ տափարակներում, Շամքորի, Շամշադինի շրջաններում»[83]:

© National Library of Armenia

Նոյն զբաղմունքին էր Թարթառ (Տրտու) գետի նախալեռնային հոսանքներում (ներկայիս՝ Մարտակերտի շրջան) բնակուող քրդական Քոլանի ցեղը, որն ապրում էր գետնափոր հիւղակներում եւ բացարձակապէս ծանօթ չէր ո՛չ երկրագործութեանը, ո՛չ էլ արհեստներին[84]:

Այդպիսին էր քոչուոր կամ կիսաքոչուոր տնտեսաձեւ վարող ցեղերի զարգացման մակարդակը, եւ, ըստ էութեան, այն բնորոշ էր նաեւ Արցախ եւ դրա մերձակայք թափանցած վաչկատուն միւս ցեղերին էլ: Այս պայմաններում, անշուշտ, լուրջ չեն կարող հնչել ուսումնասիրողների կարծիքները «քոչուորական» գորգագործութեան կարեւորութեան մասին առհասարակ, եւ մասնաւորապէս՝ վերոյիշեալ Վ. Ն. Լեւիաթովի պնդումները, ըստ որի՝ ԺԸ. դ. Ղարաբաղը առաւելապէս յայտնի էր քոչուորական արտադրանքով՝ գորգերով եւ կարպետներով[85]:

Այս եւ միւս ուսումնասիրողների նմանօրինակ եզրայանգումները հիմնազուրկ են դառնում իրենց իսկ բերած վերոնշեալ տուեալներով: Իսկ թէ, այնուամենայնիւ, քոչուորական տնտեսաձեւն ինչքանով էր նպաստաւոր գորգագործութեամբ զբաղուելու համար, իր երգերից մէկում, որի մասին մեզ տեղեկացնում է Լեաթիֆ Քերիմովը, ասում է ԺԸ. դ. ապրած աշուղ Վագիֆը՝ Շուշիի Փանահ խանի վեզիրը.

«Եթէ գեղջկուհու իրանը նուրբ է ջնարակի նման,

Նա արժանի է ոչ թէ հանայի (գորգագործի հաստոց - Ա. Պ.), այլ՝ հինայի:

Քոչուորն անտուն է, հանգրուան չունի,

Մի՞թէ կարող է նա դրան յարմարուի...»[86]:

Աւելացնենք, որ, Յ. Զեդգենիձէի վկայութեամբ, Շուշիի մահմեդականների պատկերացումներով գորգագործի հաստոցը «չար սատանայի յօրինած յարմարանք է»[87]:

Այս ամէնը վերաբերում է համեմատաբար ուշ ժամանակաշրջաններին, իսկ ինչպիսի՞ն էր իրավիճակը մինչ այդ:

Սոյն ուսումնասիրութեան նախորդ էջերում գորգագործութեան բարձր մակարդակը Հայաստանում ներկայացնելու համար բազմիցս դիմել ենք Թ.-ԺԳ. դդ. արաբական աղբիւրներին: Դրանցում յիշատակութիւններ կան նաեւ միջինասիական ժողովուրդների զբաղմունքների, մասնաւորապէս՝ նաեւ ոստայնանկութեան մասին: Սակայն արտադրանքի թւում նշւում են հիմնականում կտորատեսակներ՝ հագուստի, վրանի, փռոցներ եւ յատկապէս՝ թաղիք[88]: Այս վերջինս առաւելապէս բնորոշ էր թուրքերին[89]: Գորգեր գործում էին միայն Խորեզմում եւ Մերւում[90]: Մեզ յայտնի չեն այդ գորգերի գեղազարդման մանրամասներն ու տեխնիկա-տեխնոլոգիական յատկանիշները, բայց աղբիւրներում յիշատակւում է, որ նախընտրելի էին հայկական գորգերը, որոնք այլ գորգերի թւում առանձնացւում էին հէնց «հայկական անունով»[91]:

Այսպիսի պարագաներում անհասկանալի է «քոչուորական գորգագործութիւն» հասկացողութիւնը եւ մանաւանդ՝ դրա դերը Հայաստանում եւ յարակից գորգագործական կենտրոններում, որտեղ այդ զբաղմունքը, ինչպէս տեսանք, յայտնի էր շատ աւելի վաղ ժամանակներից: Այսուհանդերձ, մենք նպատակ չունենք բացարձակապէս ժխտելու քոչուոր կամ կիսաքոչուոր մահմեդական ցեղերի ոստայնանկութեամբ զբաղուելը թէկուզ այն պատճառով, որ նրանց աղքատիկ կենցաղում անհրաժեշտ էին նաեւ պարզունակ գործուածքներ, եւ, ունենալով անհրաժեշտ հումք, ձմեռային ամիսներին հնարաւորութիւն ունէին զբաղուելու նաեւ ոստայնանկութեամբ: Օրինակ՝ յայտնի է, որ Արցախի ու շրջակայքի քոչուորներն ու կիսաքոչուորները XIX դ. գործում էին կարպետներ եւ վրանի ծածկոցներ[92]: Այդ մասին յայտնող հայ գրող Ռաֆֆին միաժամանակ, որպէս ականատես, գրում է, որ Ղազախի, Շամշադինի թաթար (այժմ՝ ադրբեջանցի) տղամարդիկ արհեստով չեն զբաղւում, բայց նրանց կանայք խուզում են ոչխարների բուրդը, թել են մանում, կարպետներ գործում: Դրանք թէեւ նուրբ չեն, բայց շատ դիմացկուն են[93]:

Հետաքրքիր են նաեւ Ելիզաւետպոլի գաւառի գիւղացիների տնտեսական կենցաղը ուսումնասիրող Ի. Ա. Աբէլովի դիտարկումները, ըստ որոնց՝ գաւառում գորգագործութեամբ զբաղւում էին բացառապէս կանայք եւ առաւել որակեալ գորգեր գործում էին գաւառի արեւելեան մասում[94]: Իսկ, ինչպէս յայտնի է, արեւելեան մասն ընդգրկում էր ժամանակակից Արցախի Մարտակերտի շրջանին յարակից Շահումեանի շրջանը, Գետաշէն, Բանանց գիւղերն ու ամբողջովին հայաբնակ մերձակայ տարածքները (պատմական Գարդման), որոնք, որպէս հայկական գորգագործութեան կենտրոն, 1920-1930-ական թթ. առանձնացրել էր նաեւ կովկասեան գորգերի յայտնի մասնագէտ Մ. Իսաեւը[95]:

Այսպիսով, եղած տուեալները վկայում են, որ ինչպէս Արցախում, այնպէս էլ պատմական Հայաստանի միւս գորգագործական տարածաշրջաններում այդ արհեստը համարուել է հայոց աւանդական եւ կարեւոր զբաղմունքը: Ըստ այդմ՝ դրանք առանցքային նշանակութիւն ունեն նաեւ վիշապագորգերի ծագումնաբանութեան ու տարածման շրջանների բացայայտման առումով:

Այդ ամէնի հետ առնչուող բազմաբնոյթ եւ տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող աղբիւրների համադրութեամբ է ահա, որ հնարաւոր է դառնում որեւէ տարածաշրջանում գորգագործութեան եւ գորգերի այս կամ այն խմբի ծագելու եւ տարածուելու հարցի հիմնաւորումը:

Վերոյիշեալ փաստարկների առկայութեամբ անհիմն ենք համարում հայոց վիշապագորգերին «արեւելեան», «սելջուկեան», «չին-մոնղոլական» ծագում վերագրելու կարծիքները, ինչպէս նաեւ «քոչուորական գորգագործութիւն» հասկացութիւնը եւ մանաւանդ՝ դրա դերն ու նշանակութիւնը հայոց գորգագործութեան պատմութեան ասպարէզում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Վ. Թեմուրճեան**, *Գորգագործութիւնը Հայաստանում*. Երեւան, 1955, էջ 98:

2 **Վ. Թեմուրճեան**, *Գամիրքի հայերը (պատմաազգագրական ուսումնասիրութիւն)*._ Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, Երեւան, 1979, էջ 46 (յետայսու՝ **Վ. Թեմուրճեան**, *Գամիրքի հայերը*):

3 **Եզնիկ Կողբացի**, *Եղծ աղանդոց* (թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Ա. Ա. Աբրահամեանի), Երեւան, 1970, էջ 80:

4 *Կանոնք* **Յովհաննէս Մանդակունւոյ** հայոց կաթողիկոսի, *Կանոնագիրք հայոց*, ձեռագրերի համեմատութեամբ խմբագրեց՝ Արսէն Ղլտճեանը, Թիֆլիս, 1913, էջ 84:

5 *Պատմութիւն* **Շապհոյ Բագրատունւոյ**, ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 84: Այս մասին մանրամասն տե՛ս **Մ. Աբեղեան**, «*Վիշապներ*» *կոչուած կոթողները՝ իբրեւ Աստղիկ-Դերկետոյ դիցուհու արձաններ*, Երեւան, 1941, էջ 43-47:

6 **Մխիթարայ Այրիվանեցւոյ** *Պատմութիւն Հայոց*, Մոսկուա, 1860, էջ 54:

7 Գամիրքում այդպիսի գօտիները յայտնի էին «ջրեր» անունով. տե՛ս **Վ. Թեմուրճեան**, *Գամիրքի հայերը*, էջ 46:

8 **E. Korkhmasian, I. Drampian, Gr. Akopian**, La miniature Arménienne 13-14 siècle, Leningrad, 1984. նշ. աշխ., տախտակ 9:

© National Library of Armenia

9 **Գ. Զուգասզեան**, *Գրիգոր Ծաղկող*, Երեւան, 1987. էջ 116:

10 Անդ. էջ 7:

11 **Գ. Յովսէփեան**. *Իգնատիոս մանրանկարիչ եւ Ծոոոթկանց տոհմը.*_ Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան (կազմեց. առաջաբանը գրեց եւ ծանօթագրեց Մ. Ղազարեանը), Երկեր, հտ. Ա, Երեւան, 1983. էջ 250-252 (յետայսու՝ Գ. Յովսէփեան):

12 Անդ, պատկեր 48:

13 **Ի. Ռ. Դրամպյան., Է. Մ. Կորխմազյան,** Художественные сокровища Матенадарана, Москва, 1976, պատկեր 105, էջ 88-89:

14 Տե՛ս **Ն. Յ. Մարր, Յ. Смирнов**, *Вишапы*, Л.,1931; **Б. Б. Пиотровский,** *Вишапы-каменные статуи в горах Армении*, Л., 1939; **Մ. Աբեղեան**, նշ. աշխ., էջ 87. **Գ. Ղափանցեան**, *Արա Գեղեցիկի պաշտամունքը*, Երեւան, 1946, էջ 111-113:

15 **С. А. Есаян,** *Древняя культура племен северо-восточной Армении III-I тыс. до н.э.*, Ереван, 1976, ст. 117, 147, 208-210.

16 **Т. С. Хачатрян**, *Древняя культура Ширака*, Ереван, 1975, ст. 264; նոյնը՝ *Артикский некрополь*, Ереван, 1979, ст, 146:

17 **Т. С. Хачатрян**, *Древняя культура Ширака*, ст. 201-202; **А. С. Верховская**, նշ. աշխ., էջ 67:

18 **Ա. Պողոսեան,** *Ջրի եւ պտղաբերութեան պաշտամունքի մի քանի արտայայտութիւններ հայկական զարդարուեստում.*- Աշխատութիւններ Հայաստանի Պատմութեան պետական թանգարանի, հտ. VII, Երեւան, 1981, էջ 72-75:

19 Որպէս դասական վիշապագորգի տիպիկ նմոյշ տե՛ս **Fridrich Sarre** and **Hermann Trenkwald,** *Oriental carpet Designs in Full Colour*, New York, 1979, պատկեր 29:

20 **V. Gantzhorn**, նշ. աշխ., էջ 350:

21 Տե՛ս ՀԱՊԹ, գործուածքի ֆոնդ, գ/հ 7013: Այս գորգը 1987 թ. Հայաստանի Ազգագրութեան թանգարանին է նուիրել ֆրանսահայ բարեգործ, գորգահաւաք Գեւորգ Բաքրճեանը:

22 Այս մասին տե՛ս **Ա. Պողոսեան**, *Հայաստանում գորգագործութեան ծագման հարցի շուրջ*, ՊԲՀ, թիւ 2, 2001, Երեւան, էջ 241-241:

23 **Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ**. *Տիեզերական պատմութիւն* (թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Վ. Վարդանեանի), Երեւան, 2001 էջ 316:

24 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ՝ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 215-216:

25 **Յ. Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Բ, մասն Ա, Երեւան, 1957. էջ 402:

26 **Թէոփանէս՝ Խոստովանող**. *Ժամանակագրութիւն.*_ Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. 13, Բիւզանդական աղբիւրներ, Դ (թարգմանութիւնը բնագրից, առաջաբանն ու ծանօթագրութիւնները՝ Հ. Բարթիկեանի), Երեւան, 1983, էջ 180. **Хила-ас Саби**, *Установление и обычаи двора халифов* (перевод с арабского И. Михайлова), 1983, ст. 26; **Михаил Пселл,** *Хронография* (перевод статья и примечание Л. Ю. Любарского), 1978, ст. 87; **Лев Диакон**, История (перевод М. М. Копыленко), М., 1988, ст. 77; **М. Я. Сюзумов**, Ремесло и торговля в Константинопле.- Византийский Временник, 4, 1951, ст. 22-28.

27 **Ե. Լալայեան**, *Գանձակի գաւառ (նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար)*, Երկեր, հտ. 2, Երեւան, 1988, էջ 249:

28 Այդ առումով յատկանշական է, որ նոյնիսկ Լիւդովիկոս ԺԴ. թագաւորը 1671 թ. պարսից շահին ի թիւս այլ նուէրների, յարմար է գտել ուղարկել նաեւ 82 կտուտիչ՝ գորգագործի գործիք. տե՛ս **Մ. Կ. Զուլալեան**, *Հայ ժողովրդի պատմութեան հարցերը՝ ըստ եւրոպացի հեղինակների. XIII-XVIII դդ.*, գիրք Ա, Քաղաքական պատմութիւն, Երեւան, 1990, էջ 309:

29 **Ա. Պողոսեան**, *Հայաստանում գորգագործութեան ծագման հարցի շուրջ*, ՊԲՀ, 2001, թիւ 3, էջ 242:

30 **V. Gantzhorn**, նշ. աշխ., էջ 338-340. **M. Ghazarian,** *Armenian Carpet*, Los Angeles, 1988, p. 12-16; **Der Manuelian Lusi** and **Murrey L. Eiland**, Weavers, Merchants and Kings. The Inscribed Rugs of Armenia, Fort Worth, 1984, p. 51-60.

31 **Rudolf Neugebauer** und **Julius Orendi**, *Handbuch der Orientalischen Teppichkunde*, Leipzig, 1909, p. 89.

K. Erdman, *Der Orientalische Knupteppiche*, p. 45-46; **S. Yetcin,** նշ. աշխ., հտ. 1, էջ 37-39:

32 **Л. Керимов**, *Азербайджанский ковер*, т. 2, П.,1983, ст. 80-82.

33 **Wertime T Yohn, Wright E Richard,** The Tabris Hypothesis. the Dragon and Related Carpets. London, 1990, p. 45-48 (յետայսու՝ **Wertime T Yohn, Wright E Richard**):

34 Մասնագէտների ուշադրութեանն ենք ներկայացնում այն փաստը, որ Թուրքիայի թանգարաններում պահուող վիշապագորգերը, ըստ էութեան՝ հիմնականում հաւաքուել են Վասպուրականի ու Բարձր Հայքի գորգագործական կենտրոններից (տե՛ս **Ա. Սագզեան**, *Հայկական գորգերը ԺԵ-ԷՆ ԺԹ դարերը*, «Անահիտ», 1932.

թիւ 5-6. էջ 116) եւ Դէր Էլ-Զոր բռնագաղթուած հայերի կայանատեղերից ու կոտորածների վայրերից: Մանաւորապէս՝ միայն Ճարաբլուս փոքր բնակավայրից Էֆկաֆի թանգարանում է յայտնուել մօտ քսան վիշապագորգ (տե՛ս **S. Yetcin**, նշ. աշխ.): Միևնոյն, ականատեսների վկայութեամբ, հենց Սիրիայի ու Թուրքիայի ներկայիս սահմանագծում ընկած այդ բնակավայրում էլ կատարւում էր գաղթականների վերջին կողոպուտը (տե՛ս **Զ. Եսայեան**, *Ժողովրդի մը հոգեվարքը*, «Գործ», Բաքու, 1917, թիւ 2):

35 Տե՛ս, օրինակ, **Rudolf Neugebauer** und **Julius Orendi**, նշ. աշխ., էջ 8-9:

36 Այս մասին տե՛ս **Ա. Պողոսեան**, *Հայաստանում գորգագործութեան ծագման հարցի շուրջ*, ՊԲՀ, 2001, թիւ 3, էջ 236-238:

37 Այս մասին տե՛ս **Ա. Պողոսեան**, *Գորգապատկերները միջնադարեան հայ մանրանկարներում. 11-13-րդ դդ.*_ Հանրապետական գիտական նստաշրջան՝ նուիրուած 1982-1983 թթ. ազգագրական եւ բանահիւսական դաշտային հետազօտութիւնների հանրագումարին (զեկուցումների հիմնադրոյթներ), Երեւան, 1984, էջ 38-40:

38 **Т. Измайлова**, *Армянская миниатюра XI века*, М., 1979, ст. 108, 110; **S. Yetcin**, նշ. աշխ., հտ. I, նկ. 1, 25, 26, հտ. II, նկ. 121, 139, 144, 153. **Armenien Wiederentdechungen ejner elten Kulturlandcsaft**, Museum Bochum, 1995, նկ. 230, 236:

39 **E. Korkhmasian, I. Drampian, Gr. Akopian**, նշ. աշխ., տախտակ 9:

40 Հայոց հաւատալիքներում վիշապի պաշտամունքի մասին տե՛ս **Մ. Աբեղեան**, նշ. աշխ., էջ 10-50. **Б. Б. Пиотровский,** նշ. աշխ., էջ 10-25. **M. Chazarian**, նշ. աշխ., էջ 20-21:

41 Տե՛ս, օրինակ, որպէս տիպիկ նմոյշ՝ **M. Chazarian,** նկ. 115. Islamic Carpets from the Collection of the Arts **Joseph V. Mcmullan**. By David Sylvester, London, 1972, պատկեր XII:

42 **M. Chazarian,** նկ. 40, 115, 146. **J. Bennet,** *Oriental Rugs*, vol. I, Caucasian, 1981, նկ. 96-97. **L. Ter-Manuelian and Murrey L. Eiland,** նշ. աշխ., նկ. 48 (յետայսու՝ **Joseph V. Mcmullan**):

43 **Joseph V. Mcmullan,** նշ. աշխ., նկ. 12:

44 **Ա. Պողոսեան**, *Գորգապատկերները միջնադարեան հայ մանրանկարներում*, էջ 39:

45 **M. Ejland**, *Oriental Rugs*, New York, 1976, էջ 188:

46 Անդ, էջ 350:

47 **Սարգիս արքեպս. Ջալալեանց**, *Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան* (աշխատասիրութեամբ՝ տեառն Սարգսի Սանահնեցւոյ Ջալալեանց թեմական Արքեպիսկոպոսի հայոց Վրաստանի, Իմերեթի եւ այլն), մասն Բ. Տփղիս, 1858, էջ 202, 258, 331:

48 **M. Chazarian,** նշ. աշխ., էջ 108, 124, 132, 144:

49 Այս տիպի գորգեր տե՛ս **M. Chazarian,** նշ. աշխ., էջ 108, 124, 132, 144:

50 **Л. Керимов**, նշ. աշխ., հտ. 3, էջ 224-226:

51 **M. Ejland**, նշ. աշխ., էջ 193:

52 **M. Chazarian,** նշ. աշխ., նկ. 99, 119, 145:

53 Անդ, էջ 45, 46. **M. Ejland**, նշ. աշխ., էջ 190:

54 **V. Gantzhorn**, նշ. աշխ., էջ 380:

55 **M. Ejland**, նշ. աշխ., էջ 190:

56 **M. Chazarian**, նշ. աշխ., նկ. 38. 42, 104:

57 Der Manuelian Lusi and Murray Ejland, նշ. աշխ., էջ 9. **J. Bennet**, նշ. աշխ., էջ 108, 111. **R. H. Kevorkian, Berdj Ashdjian**, նշ. աշխ., նկ. 64, 81:

58 **Աբրահամ Կրետացի**, *Պատմութիւն*, Երեւան, 1973, էջ 153:

59 Այս տիպի XVIII դ. թուագրուած մի նմոյշ տե՛ս **Rudolf Neugebauer** und **Julius Orendi**, նշ. աշխ., էջ 20, պատկեր 9:

60 Այս առիթով տե՛ս **Gregorian T. Arthur, Gregorian Joyce Hampshire**, *Armenian Rugs from Gregorian Collection*, Copyright, 1987, p. 171. պատկերուած այս տիպի հայատառ արձանագրութեամբ 1889 թ. գործուած գորգը, որը վերագրուած է Ղարադաղին:

61 **Joseph V. Mcmullan,** նշ. աշխ., նկ. XVII:

62 **Ս. Դաւթեան**, *Հայկական կարպետ*, էջ 48-50:

63 **Ա. Ալպոյաճեան**, *Պատմութիւն Եւդոկիոյ հայոց*, Կահիրէ, 1952, էջ 578:

64 Տե՛ս ՀԱՊԹ, գործ. ֆոնդ, թիւ 5370:

65 **Ն. Յ. Մարր,** *Кавказский культурный мир и Армения*, Петроград, 1919, ст. 44.

66 **Ս. Բարխուդարեան**, *Դերբենտի հայ-աղուանական թագաւորութիւնը*, ՊԲՀ, Երեւան, 1969, նո. 3, էջ 139-141:

67 Անդ, էջ 141-143. տե՛ս նաեւ **Н Караулов,** *Сведение арабских письменных источников о Кавказе Армении и Азербайджане.*_ Сборник материалов для изучения племен и народов Кавказа, вып. 29, Тифлис, 1901, ст. 97, 107 (յետայսու՝ СМОМПК); **В. Н. Левиатов,** *Очерки из истории Азербайджана в XVIII веке*, Баку, 1948, ст. 72: **Ս. Բարխուդարեան**, նշ. աշխ., էջ 128-133. **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 8-9, 248-249. **Ш. Мнацаканян,** *О литературе Кавказской Албании*, Ереван, 1969, ст. 128.

68 Տե՛ս *Армяно-русские отношения в XVIII веке.*- Сборник документов, т. II, ч. II,

© National Library of Armenia

Ереван, 1967, ст. 230-235; **Մակար Բարխուդարեանց**. *Աղուանից աշխարհ եւ դրացիք*. Թիֆլիս, 1898, էջ 143:

69 **А. А. Бабаев,** *Ковры Шеки-Закатальской и Кахи-Белоканской зон.*_ Международный симпозиум по искусству восточных ковров, тезисы, Баку, 1983, ст. 36.

70 **В. В. Левиатов,** 68-71.

71 **Մակար Բարխուդարեանց**. նշ. աշխ., էջ 296, **Տէր-Գասպարեան Բաղդասար Շուշեցի**, *Մաղկաքաղ աշխարհացոյց*, «Բանբեր Մատենադարանի», Երեւան, 1969, 9, էջ 292-294:

72 Մասնաւորապէս՝ 1880-ական թթ. Այսրկովկասի հիւսիսարեւելեան գաւառներում Մակար Բարխուդարեանի կատարած տեղագրական հետազօտութիւններից պարզուել է, որ միայն արցախեան գորգագործութեան նշանաւոր կենտրոն Ճարտար գիւղից ԺԷ.-ԺԸ. դդ. արտադաղթածները բնակութիւն են հաստատել Այսրկովկասի հիւսիսարեւելեան՝ Շամախու ու մերձակայքի եօթ գիւղում՝ Արփաուտ, Ղարաքարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշխուրդ, Քեալբանդ, Վանքաշէն (**Մակար Բարխուտարեանց**, *Աղուանից աշխարհ եւ դրացիք. Արցախ*, Երեւան, 1999, էջ 89-90, 97, 104, 107): Հեղինակի հաւաքած տուեալներից պարզւում է, որ այդ տարածքներում միայն Արցախի Վարանդա գաւառից վերաբնակուել են տասնեօթ գիւղի հարիւրաւոր ընտանիքներ: Նա նշում է նաեւ, որ Այսրկովկասի հիւսիսարեւելեան, այդ թւում՝ Դերբենտում ու մերձակայքում ապրող հայերն ու Արցախի հայերը խօսում են միեւնոյն բարբառով ու կրում են միեւնոյն տարազը (անդ, էջ 150): Խնդրոյ առարկայ հարցերի ուսումնասիրման ասպարէզում կարեւոր են նրա հաւաքած այն տուեալները, ըստ որոնց պարզւում է, որ միայն Շաքիի ու Շամախու գաւառներում ԺԷ.-ԺԸ. դդ. ամբողջութեամբ դաւանափոխ են եղել աւելի քան երեսունհինգ հայկական խոշոր գիւղերի բնակիչներ (անդ, էջ 147-148): Շաքիի գաւառում բնակուող հայերի մասին, որպէս ականատես, տեղագիր Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանցը, 1820-30-ական թթ. հաւաքած տուեալների հիմամբ, նշում է, որ՝ «Նրանք տունք երեք հազար են, գաղթեալք յԱրցախու, բնութեամբ մարդասէր են ու բարեպաշտ» (**Սարգիս արքեպս. Ջալալեանց**, նշ. աշխ., էջ 368): ԺԹ. դ. կատարուած լեզուա-բարբառային եւ տարազի մանրամասների ուսումնասիրութիւնները բացայայտել են Փոքր Ասիայի արեւմտեան մի շարք գաւառներում (Սպարտայ, Բուրդուր եւ այլն) ապրող հայերի արցախ-սիւնիքեան ակունքները, որոնք ընդհուպ ցեղասպանութիւնը պահպանել էին նախկին աւանդոյթները (տե՛ս, օրինակ, **Ն. Ա. Մկրտչեան**, *Բուրդուրի բարբառի ձեւաբանութիւնը*, «Լրաբեր հասարակական գիտութիւնների». Երեւան, 1966, թիւ 1, էջ 49): Սոյն հանգամանքը հաշուի առնելով էլ պատահական չենք համարում այդ տարածաշրջաններին բնորոշ գորգերի գեղազարդման համակարգի ակնյայտ նմանութիւնը սիւնիք-արցախեան գորգարուեստին:

73 **Vohn T. Wertime** and **Richard Wright**, նշ. աշխ., էջ 36:

74 Մովսէս Կաղանկատուացի, էջ 166:

75 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, 1940, էջ 215:

76 *Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии с 1768-1774 гг.*, т. I, под редакции А. А. Цагарели, Тифлис, 1891, ст. 434.

77 **Vohn T. Wertime** and **Richard Wright**, նշ. աշխ., էջ 36:

78 **Н. А. Абелов,** *Исследование экономического быта государственных крестян Елизаветпольского уезда Елизаветпольской губернии*, Тифлис, 1887, ст. 12; История Азербайджана, т. II, под редакции Н. А. Гусейнова, А. С. Сумбатзаде и др., Баку, 1960, ст. 26, 59-60.

79 **Ե. Լալայեան**, *Վարանդա*,- Երկեր, հտ. 2, Երեւան, 1988, էջ 49:

80 **Я. Зедгенидзе,** *Город Шуша. Производство ковров и паласов.*- СМОМПК, вып. XI, 1891, ст. 1.

81 **В. Н. Левиатов,** նշ. աշխ., էջ 40:

82 **Րաֆֆի**, *Երկու ամիս Աղուանից եւ Սիւնեաց աշխարհներում*.- Երկերի ժողովածոյ, հտ. 9, Երեւան, 1987, էջ 236:

83 Անդ, էջ 275. տե՛ս նաեւ **Լէօ**, *Իմ յիշատակարանը*.- Երկերի ժողովածոյ, հտ. 8, Երեւան, 1985, էջ 131-132:

84 **В. Н. Левиатов**, նշ. աշխ., էջ 55:

85 **Л. Керимов**, նշ. աշխ., հտ. 3, էջ 121:

86 **Я. Зедгенидзе,** նշ. աշխ., էջ 47-48:

87 Материалы по истории туркмен и Туркмении, т. I, Арабские источники, ст. 128, 135, 146, 150, 174, 202 и тд.

88 Նշ. աշխ., էջ 202:

89 Նշ. աշխ., էջ 135, 146:

90 Նշ. աշխ., էջ 238. **А. Мец,** նշ. աշխ., էջ 360-380:

91 **Րաֆֆի**, *Ճանապարհորդութիւն Թիֆլիսից մինչեւ Ագուլիս*.- Երկերի ժողովածոյ, հտ. 9, Երեւան, 1987, էջ 176:

92 Անդ, էջ 175:

93 **И. А. Абелов,** նշ. աշխ., էջ 97:

94 **М. Исаев,** *Ковровое производство Закавказья*, Тифлис, 1932, ст. 123.

О ВОПРОСЕ ПРОИСХОЖДЕНИЯ И АРИАЛОВ ВИШАПОГОРГАХ

Ашхундж Погосян

О результате анализа различных источников, автор заключает, что наиболее вероятными регионами происхождения вишапагоргов были крупнейшие центры ковроткачества исторической Армении Арцах и Сюник. Автор обосновывает свое предположение, исходя из анализа традиций орнаментального оформления классических и более поздних вариантов вишапагоргов /"Джраберт", "Гуар", "Хндзореск", "Сисакан" и другие/, а также сопоставления бордюров и отдельных композиций классических вишапагоргов с бордюрами армянских миниатюр 11-13-ых вв., созданных в скрипториях Ширака, Лори, Утика и Арцаха. Тем самым обосновывается не только наличие местной традиции, но и ее приблизительный возраст и ареалы распространения.

THE VISHAPAGORG CARPETS

Ashkhunj Poghosyan

The author makes his contribution to the discussion on the origin of the vishapagorgs (dragon carpets) - carpets with stylized dragon figures. It is supposed that the most probable regions of the vishapagorg origin could be Artsakh and Syunik, the important carpet-weaving centres of historical Armenia. To base this supposition, the author analyzes the traditional ornamental designing of classical and more recent vishapagorg carpets, as well as compares the borders and some compositions of classical vishapagorgs with the borders of Armenian miniatures created in the Shirak, Lori, Utik and Artsakh scriptoriums in 11th-13th centuries. As a result, an existence of a local tradition, as well as its approximate age and areas of dissemination are grounded.

© National Library of Armenia



Ակ.1

Ակ.2



Ակ.3



Ակ.4



Ակ.5



Ակ.6



Ակ.7



Ակ.8



Ակ.9

© National Library of Armenia